ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման ընթացքում

Հեղինակ՝ Եղենա Շահգելդյան

Ղեկավար՝ Գայանե Վարդանյան

Արտաշատ 2023

Բովանդակություն

	էջ
Ներածություն	3
Գլուխ 1. Արժեքային համակարգ	5
1.1. Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններ	5
1.2. Սովորողների արժեքների ձևավորման խնդիրները դպրոցում	7
Գլուխ 2. Սովորողների արժեքային կողմնորոշումը	9
2.1. Արժեքային վերակողմնորոշումները	9
2.2. 21-րդ դարի մատահրավերները սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը	10
Գլուխ 3. Արժեք և նորմ հասկացությունները	12
3.1. Արժեքների տարբերակումը	13
3.2. Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները»	14
Եզրակացություն	16
Օգտագործված գրականության ցանկ	17

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը: Թեմայի կարևորությունը և արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ կրթական պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

Ակնհայտ է մաթեմատիկայի ուսուցման դերը սովորողների աշխարհայացքի ու արժեհամակարգի ձևավորման, աշխարհընկալման, ճանաչողության, հոգեկան գործընթացների զարգացման, ինքնիրացման և կրթական այլ խնդիրների լուծման գործում: Այս իրողությունները լայնորեն լուսաբանված են գիտական գրականության մեջ և ամրագրված շատ երկրների, այդ թվում նաև ՀՀ կրթական քաղաքականությամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն տարբեր գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային բազմերանգության ու բազմազանության մեջ:

Հետազոտական աշխատանքի հետազոտության օբյեկտը: Թեմայի հետազոտության օբյեկտը սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն է ուսումնական առարկաներ՝ մասնավորապես մաթեմատիկա առարկայի, դասավանդման ընթացքում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Գաղտնիք չէ, որ այսօր հայ աշակերտի արժեքային համակարգը խարխլված է, իսկ արժեքները խեղաթյուրված, շատ աշակերտներ այսօր չունեն ամուր հոգևոր առանցք, պատկերացում չունեն վարքի, բարոյական մոտիվների և իսկական արժեքի մասին, չեն գիտակցում դրանց դերը իրենց ուղին ընտրելիս, մեծամասամբ նյութապաշտ են:

Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

Արդի տնտեսական բարդ պայմաններում դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Յուրաքանչյուր ուսուցչի, այդ թվում նաև մաթեմատիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Հետազոտական աշխատանքը իր մեջ ներառում է բովանդակություն, ներածություն, 3 գլուխ, և գրականության ցանկ: Հետազոտական աշխատանքի ընդհանուր ծավալը 17 էջ է:

Գլուխ 1. Արժեքային համակարգ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից [1, էջ 152]:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է բնագիտական և տեխնիկական ոլորտի ուսումնական առարկաների դերը:

1.1. Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններ

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ,

այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» :

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» [2, էջ 110]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը

նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

1.2. Սովորողների արժեքների ձևավորման խնդիրները դպրոցում

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի [3, էջ 17]:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին

մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Գլուխ 2. Սովորողների արժեքային կողմնորոշումը

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

Ներկայումս հասարակության սոցիալ-տնտեսական բարեփոխումների շրջանի բացասական հետևանքներից մեկը սոցիալական և անհատական արժեքների համակարգում տեղի ունեցող որակական փոփոխություններն են:

Արժեքային կողմնորոշումը մարդու համեմատաբար կայուն, ընտրովի վերաբերմունքն է նյութական և հոգևոր մի շարք արժեքների ու իդեալների նկատմամբ, որոնք դիտարկվում են որպես անհատի կենսագործունեության կարիքների բավարարմանն անհրաժեշտ առարկաներ, նպատակներ կամ միջոցներ [4, էջ 28]:

Արժեքային կողմնորոշումներում կարծես կուտակվում է մարդու անհատական զարգացման ընթացքում ձեռք բերված կյանքի փորձը, որը պայմանավորում է նրա փոխհարաբերությունն այլ մարդկանց հետ, այդ թվում՝ վերաբերմունքն իր նկատմամբ: Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը:

2.1. Արժեքային վերակողմնորոշումները

Արժեքային վերակողմնորոշումներն առաջին հերթին արտացոլվում են աշխատանքի և փողի նկատմամբ մարդկանց ունեցած վերաբերմունքի մեջ: Սակայն մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ «նոր արժեքների» յուրովի ընկալումը կրում է տարասեռ բնույթ, որը կախված է մի շարք գործոններից. այն սոցիալական միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն:

Զանգվածային գիտակցության և վարքագծի մեջ նոր երևույթներն ունեն մի ընդհանրություն. անձնական և հասարակական կողմնորոշիչների որոնում, որոնցով պայմանավորված են

հասարակության մեջ կյանքի անընդհատ փոփոխվող պայմաններում մարդկանց ժամանակակից պահանջմունքներն ու հակումները:

Կրթության դաստիարակության ռազմավարություն մշակող գիտնականները կանգնած են մի փաստի առաջ. ճգնաժամային իրավիճակներում անհատի արժեքային կողմնորոշիչներն անընդհատ փոփոխվում են: Դրա հետ մեկտեղ փաստ է նաև այն, որ դպրոցը բավականին պահպանողական կառույց է: Ճիշտ է նկատում Լ. Պ. Բուևան, որ զարգացող հասարակության մեջ արժեբանական խնդիրները մղվում են առաջին պլան, իսկ ճգնաժամային իրավիճակներում արժեբանական պրոբլեմատիկան կորցնում է իր արդիականությունը: Արժեքային կողմնորոշիչների վերաիմաստավորման անհրաժեշտությունը ստիպում է ոմանց նորից վերադառնալ սկզբնական համամարդկային արժեքներին: Ավելին, ոմանք էլ ընկճվում են, հուսահատվում, հրաժարվում «պայքարից» կամ ընկնում են քաղաքական և կրոնական արկածախնդիրների ազդեցության տակ, մյուսներն էլ կյանքի իմաստը փնտրում են փողի մեջ և այլն [5, էջ 24]:

Դաստիարակության գործը կազմակերպողները պիտի կարողանան սովորողին ցույց տալ նյութական և հոգևոր աշխարհի անմիջական կապը, այն առումով, որ առաջինը կարող է լինել միջոց երկրորդին հասնելու համար: Փողը, ոսկին, կահույքը, թանկարժեք մեքենաները չեն կարող լինել կյանքի նպատակ, մարդկանց գնահատելու չափանիշ:

2.2. 21-րդ դարի մատահրավերները սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը

Վերջին երկու տասնամյակում սովորողների արժեքների փոխակերպումները շարունակական բնույթ են կրում: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով, տեղեկատվադաշտի առևտրայնացմամբ ուղեկցված իրողություններով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ:

21-րդ դարում աշակերտները զգալի գիտելիքի պակաս ունեն տեղեկատվական անվտանգության, ինֆորմացիոն հոսքի զտման՝ կարևորն անկարևորից տարբերելու հարցում:

Նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ տեղեկատվությունը դարձել է խիստ շարժուն, ինչը նույնքան շարժուն է դարձրել օտար արժեհամակարգի ներթափանցումը:

Տեղեկատվության աննախադեպ ազատությունը 21-րդ դարում, իր անբացատրելի գաղտնիությամբ և թափանցիկ գաղտնիքներով, ասես մագնիսական սարդոստայն, իր մեջ խճճել է սովորողներին, որոնց համար այն թվացյալ ազատություն է, ինքնահաստատման ձև, կյանքի

ընտրության ուղի, ցավոք՝ ոչ միշտ դրական երանգներով: Կրթական համակարգի առջև ծառացած գերակա խնդիրներից է սովորողներ հակահասարակական վարքի կանխարգելումն, հասարակության գնահատման տեսանկյունից արատավոր երևույթներից զերծ պահելն ու վաղվա քաղաքացու կրթումն ու դաստիարակումը: Նրանց հանդեպ այսօրվա վերաբերմունքն է ձևավորում հասարակության մեջ գոյություն ունեցող արժեքներ համակարգն ու որակները [1, էջ 102]:

Այսպիսով, անհրաժեշտ է ստեղծել անպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան բովանդակալից կյանք ունենալ սովորողներին կյանքի այն փուլում, երբ ձևավորվում է նրանց արժեհամակարգը, առավելագույնս հետ պահելով վնասներից, խթանել անձնային որակների աճին ու զարգացմանը կրթության միջոցով: Բարեբախտաբար, այսօր այս բոլոր վերոնշյալ պայմանները առկա են (Նկ. 1):



Նկ.1. Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները

Գլուխ 3. Արժեք և նորմ հասկացությունները

Նորմերը, որոնք ձևավորվել են կրթական համակարգի մեջ, հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները (այսինքն իշխող տեսակետներն այն մասին, թե որը համարել լավ, ճիշտ կամ ցանկալի): Արժեք և նորմ հասկացությունները տարբերվում են: Արժեքները՝ վերացական, ընդհանուր հասկացություններ են, իսկ նորմերը՝ որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոններն են կամ առաջնորդող սկզբունքները:

Արժեհամակարգերը, ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում, քանի որ ազդում են նորմերի վրա:

Արժեքներ կարող են համարվել.

- Առողջությունը,
- ընտանիքը, ընկերները, մտերիմները, շփումը,
- ինքակառավարումը ուսման մեջ,
- կրթությունից հաճույք ստանալը,
- նյութական բարեկեցությունը,
- հոգևոր արժեքները, հոգևոր աճը,
- ժամանցը՝հոբբի, զվարճանք, ստեղծագործական ինքնադրսևորումները,
- ինքնակրթությունը,
- սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ,
- ազատությունը (խոսքի, ընտրության և այլն), կայունությունը:

Կարող են լինել նաև այլ արժեքներ: Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է: Ինչպես նշում է հետազոտող Պալինա Գաջիկուրբանովան. «Անգետը իրերին մեծ արժեք է տալիս, քան իրականում ունեն բնության մեջ, և սխալ պատկերացումներ է կազմում բարու և չարի մասին: Արդյունքում նա ձգտում է հասնել նրան, ինչն իրեն բարիք է թվում՝ առողջության, փառքի, հարստության, սակայն իր ձգտումների մեջ նա անցնում է բնության կողմից գծված որոշակի սահմանը՝ այսինքն, ընկնում է իր ցանկությունների և պատկերացումների պատճառով ստեղծված թակարդը» [3, էջ 35]:

3.1. Արժեքների տարբերակումը

Արժեքները բավարարում են սովորողի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Սովորողի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են նրա ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ:

Արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր սովորող հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել արժեք-միջոց և արժեք-նպատակ հասկացողությունները: Օրինակ «իշխանությունը», մի բան է որպես միջոց, մեկ այլ բան որպես՝ նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է «անհատ-ազգ» փոխհարաբերությունների կարգավորման առումով:

Պետք է տարբերակել արժանիքների համակարգ հասկացողությունը, որում վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքները՝ արժանապատվություն, արդարամտություն և աշխատասիրություն:

Արժանապատվությունը սեփական «Ես»-ի արժեքի գիտակցումն է: Դա սովորողի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է: Արժանապատվությունը սեփական արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է [2, էջ 98]: Եթե արժանապատվությունը հարգանքն է քո անձի հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու կրթությունը չեն նույնանում, բայց և այնպես ինչպես մշակույթում, այնպես էլ կրթության մեջ լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, ավքեր համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

3.2. Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները»

Կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը սովորողնի համար:

Արժեհամակարգում առկա արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են սովորողների համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի [4, էջ 5]:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր սովորողները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում սովորողը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց սովորողները համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը (Նկ. 2):

Նկ.2. Բնությունն ամեն ինչի մասին այնպես է հոգացել, որ ամեն տեղ սովորելու բան գտնես

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա , որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին մաթեմատիկայի դասերին:

Այսպիսով կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: «Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից:

Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին»:

Ժամանակի հրամայականով այսօր նոր կրթակարգ ստեղծելու աշխատանքներ են տարվում: Արդեն պատրաստ է և քննարկման փուլում է «Ազգային կրթակարգի» նախագիծը, որում ամրագրված են քսանմեկերորդ դարի քաղաքացու արժեհամակարգի բաղադրիչները: Խնդիր, որին ուղղված են կրթության հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների ջանքերը:

Այդ փոփոխությունը, ըստ էության, ձևավորում է մեր ապագան: Դա կլինի մի նոր փաստաթուղթ, պայմանագիր՝ այսօրվա քաղաքացու և վաղվա քաղաքացու միջև: Այն կլինի սոցիալական պայմանագիր, կրթության բարեփոխման գործիք:

Հայաստանի Հանրապետությունում գործող պետական չափորոշիչը թեև որոշակիորեն արտացոլում էր միջազգային փորձում առկա նմանատիպ փաստաթղթերի սկզբունքները, սակայն ուներ կառուցվածքային, սկզբունքային և բովանդակային մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին հանրակրթության արդյունավետ կազմակերպումը:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ սովորողներ արժեքային համակարգի ձևավորումը, այն էլ այս թվայնացման դարաշրջանում, ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և առաջարկում ենք մշտապես պահել մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:
2. Ա. Թովմասյան, Հայեցի դաստիարակության հիմունքներ: Խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2006թ., 336էջ:
3. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:
4. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:
5. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ: